

Այս է տապան բարեպաշտի՝  
 Հաստատահաւատ քրիստոնէի,  
 Ազգաւն հայ Գիրաքեցի՝  
 Որդի գոլով սա Պարոնի,  
 Գերաք աղայ ողորմելի:  
 Ով հանդիպողք ի յայսմ շիրմի,  
 Լի բերանով դուք զողորմի.  
 Թիվն. ՌՃԾԷ (= 1708):

Գերաք աղայի մասին կը պատմուի նաև հետևեալը.

Պ. Արմենակ Սազրզեան «Նոր Զուղայեցի վանատակակնի մը ակն-  
 առն հայկական երկու մեսպղներու առթիւ» գրուած յօդուածի մը  
 մէջ (Անահիտ. 1929, Մայիս-Յունիս Ա. տարի, թիւ 1, էջ 57-  
 65) կը գրէ թէ 1921ին գարնան Ֆլորանսօ գտնուած միջոցին,  
 Պարճելլօի թանգարանին մէջ ուշադրութիւնը գրաւած են փաթ-  
 թոցաւոր դէմքեր կրող մետաղներ, որոնց երկուքը հայերէն ար-  
 ձանագրութիւն ունեցեր են և երրորդ մը՝ լատիներէն: Այս վեր-  
 ջինը Սուլթան Սէլիմ Ա.ի պատկերը կը կրէր և Եգիպտոսի գը-  
 բուման ի յիշատակ յօրինուած էր:

Հայկական մետաղները իրենց երեսի կողմը կը կրէին կեն-  
 դանագիր մը. — մէկուն վրայ՝ իրանը միայն, միւսն՝ ամբողջ  
 մարմնով, — և յետսակողմը՝ համանման նշանակներ, եզերքնե-  
 րուն վրայ բոլորած և գրոշմուած են արձանագրութիւններ որ  
 նոյնն են մէն մի կողմ:

Անձնաւորութեան գլուխը խորշոմներով բեռնաւոր, ճակա-  
 տէն տեսնուած կը ներկայանայ, իրանը միայն ցոյց տուող մե-  
 տալին վրայ՝ քիչ մը քովընտի ծուած, — շեշտուած դիմագծերով  
 ու յառաջակարկառ քիթով: Երեսը՝ ածիլուած, թեթեւ ընչաքով,  
 կորովի և խիստ արտայայտութիւն մը ունի: Հագած է մուշ-  
 տակէ օձիքով վայելուչ վերարկու մը, զօտիով մը մէջքը սեղ-  
 մուած, և որուն քղանցքները զանգակած և կ'ընդլայնին: Թիկ-  
 նոց մը որ ձախ կողմ կը կոճկուի՝ ըստ պարսկական սովորու-  
 թեան, կը տեսնուի վերարկուին ներքե: Աջ ձեռքով համրիչ մը  
 կը դարձընէ, մինչ ձախը ազգրին կը կրթնի:

Այսպէս է պատկերացուած դիմանկարը, ուր աչքի կը զար-  
 նէ նաև մեծազանգուած փաթթոց մը:

Յետսակողմին վրայ կ'երևնան չորս նշանակներ: Գառն Աս-